

ՊՐԻՆՍԻՍՍ 3-Պ ՊՐԻՆՍԻՍՍ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՊՐԻՆՍԻՍՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՊՐԻՆՍԻՍՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՊՐԻՆՍԻՍՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ 55-ՊՐԻՆՍԻՍՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ,
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

Մեծարգո պարոն Հենգել Մկոյան: Մայիսի 3-ին, բոլորում է Ձեր ծննդյան 55-ամյակը: Ձեր կես դարն անցել է, սակայն ներքին լույսը, վերջին տարիների երկրի պատմության կերտման մեջ անմնացորդ մասնակցություն ունենալու Ձեր ունակությունները Ձեզ շարունակում են առույգ ու երիտասարդ պահել, նաեւ մեզ ավելի ուրախացնել, Ձեզնով ավելի շատ հպարտանալու եւ Ձեր բարեկեցությունը ցանկանալու զգացողություններով համակել: Դուք հավանաբար ինքներդ էլ չեք հաշվել (իսկ մենք հաշվել ու լա՛վ ենք հաշվել՝ լավ տեսնելով ու լավ գնահատելով), թե քանի սիրտ է ուրախացել Ձեր արած բարի, աջակցողական քայլերից, քանի նեղյալ է հրճվել-աշխարհով մեկ եղել, երբ օգնության Ձեր ձեռքն է սիրահոժար պարզվել նրան: Ու դրանից էլ հենց մի ուրախությունը երկուս, երեք, բազում է դարձել՝ նեղյալի ու մյուսների հետ միասին հրճվել եք Դուք ինքներդ՝ մեծարենցյան բնորոշմամբ՝ անանձնական ուրախությամբ: Այդ ուրախության աղբյուրն էլ ամեն անգամ նոր հունից է բխում՝ սատարումի եւ օգնության Ձեր ձեռքը մեկ խոստումնալից երիտասարդին է հասնում, մեկ՝ հարազատ լեռնաշխարհի հայրենապահպան ինչ-որ մի կառույցի, որ դժվարանում է իրականացնել իր հիանալի ծրագրերը, մեկ մարզասերներին է օգնում՝ ավելի համարձակորեն ընթանալու դեպի հաղթանակ, մեկ՝ իր համերկրացիների համար կենսական նշանակության կարելու հարցերն է կարգավորում՝ խմելու ու ոռոգման ջրի, ճանապարհների, շինությունների, հիվանդանոցների, մեկ արվեստագետներին է աջակցում, մշակութային տարբեր միջոցառումների ու ծրագրերի: Ընդամենը վերջերս էլ ամենանորն ու թարմը՝ Նինոծմինդայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հրաշալի կոթողի բարերարներից մեկն էլ դարձյալ Դուք էիք՝ պատվարժան Հենգել Միկոյան...

Երախտապարտ ենք Ձեզ. շնորհակալությո՛ւն:
Ու այս ամենը մեր երկրի՝ Վրաստանի խորհրդարանում, ուր ահա արդեն 15 տարի մեր շրջանի անփոփոխ ու մեծանուն պատգամավորն եք ու բազմիցս արդարացրել եւ արդարացնում եք մեր՝ Ձեզ միշտ ընտրելու ցանկությունը... Բացառիկ ու հազվադեպ իրողություն է սա, հավանաբար: Մեր երկրում մեկ ուրիշ երկրորդը չկա, որը 15 տարի անընդմեջ պատգամավոր լինի մի շրջանից: Ուրեմն Դուք միշտ ժողովրդի հետ եք, նրա հոգսերին ու կարիքներին զորավիզ: Հիանալի է ասել Շոթա Ռուսթավելին՝ «մարդ է՝ խոսքը գործին միշտ սազական»... Շրջանի ընտրողները միշտ վստահում են Ձեզ, Ձեր մարդկայնությանն ու պատգամավորական առաքելությանը՝ ծառայել հարազատ ժողովրդին ու բնօրրանին, երկու երկրների՝ Վրաստանի ու Հայաստանի միջեւ բարիդրացիական դարավոր հարաբերությունների առավել խորացմանն ու զարգացմանը...

Մենք գիտենք, որ Դուք նաեւ հիանալի ընկեր եք Ձեր ամենամտերիմ բարեկամների, հիանալի ամուսին՝ Ձեր տիկնոջ եւ հիանալի հայր ու պապիկ:
Ի խորոց սրտի շնորհավորում ենք Ձեր ծննդյան 55-ամյակը, մաղթում Ձեզ քաջառողջություն, ուժ, կամք, ամենայն բարիք Ձեր անձնական կյանքում ու աշխատանքային անսպառ

հաջողություններ՝ ի շահ մեր երկրի եւ ժողովրդի:

000000 000000000000
000000000000000 000000000000000000 000000000000000 000000000
000000 0000000000
000000000000000 000000000000000000 000000000000 000000000

«00000000 » 000000 0000000000 000000000 0 00000000 0000000000 000000000000000000000000
00 00 00000000 0000000000 00 000000.000000000, 00 0000 00000000000000 000000000000 000000000
00000000000000000000 000000000000 0000 00000 0000 00000000000000000000 0000000000 00000000 000000000,
000000000000 «00000000 00000000 » 00000000 00000000000000 00000000 0000000000 000000000000
0000000000 **47**0000000000 0000000000